ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/153

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

1. «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Երևանի «Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերում:

2. «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ՀՀ Արարատի մարզի «Վեդիի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1», «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.06.2020թ.-ի թիվ 26/26/9086-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) 17.06.2020թ. թիվ 02/16.4/4238-2020 գրության հիման վրա, 18.06.2020թ.-ին «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 18.06.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/153 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

25.06.2020թ.-ին և 09.07.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.07.2020թ.-ին:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 17.06.2020թ. թիվ 02/16.4/4238-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Էտալոն Գրուպ>> փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ 2020 թվականի մարտի 10-ին կնքվել են <<Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության շենքային պայմանների բարելավման և ՀՀ Արարատի մարզի <<Վեդիի ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

ձեռքբերման N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1 և N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3 պետական գնման պայմանագրերը (այսուհետ՝ Պայմանագիր):

Նշված աշխատանքների իրականացման համար ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N 709-Ն որոշմամբ հատկացվել են ֆինանսական միջոցներ: Պայմանագրի 7.13-րդ կետով սահմանված ժամկետում Ընկերության կողմից չեն ներկայացվել համաձայնագրերի միակողմանի հաստատված օրինակները, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումները՝ բանկային երաշխիքի տեսքով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետը և Պայմանագրերի 7.13-րդ կետը՝ Պատվիրատուն 2020 թվականի հունիսի 15-ից միակողմանի լուծել է Պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, Պատվիրատուն կից ներկայացրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/4» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.06.2020թ.-ի գրությամբ դիմել է «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.06.2020թ.-ի թիվ 26/26/9086-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով նաև հրավիրված նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2020/153 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 10.03.2020թ.-ին կնքվել են թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» և «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրերով պետական գնման պայմանագրեր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում՝ հիմք ընդունելով այն, որ թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» և «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրերով Ընթացակարգերը կազմակերպվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

iii. Պատվիրատուն 20.05.2020թ.-ին էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ուղարկել է թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» և «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրերով պետական գնման պայմանագրերի կնքվելիք համաձայնագրի նախագծերը՝ ծանոթանալու և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով այն կնքելու և ներկայացնելու համար:

iv. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 15.06.2020թ.-ին հրապարակված «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» և «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրով պետական գնման պայմանագրերի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 10.03.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» և «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրով պետական գնման պայմանագրերը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 15.06.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 7.13-րդ կետի ուժով (ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համաձայնագիր չի կնքվել):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.06.2020թ.-ի թիվ 26/26/9086-2020 գրությամբ «Էտալոն

Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի

պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրով պետական գնման Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արարատի մարզի «Վեդիի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի 7.13-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է

նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 10.03.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» և «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրերով պետական գնման պայմանագրերով, դրանց հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ աշխատանքների կատարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում՝ հիմք ընդունելով այն, որ թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» և «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրերով Ընթացակարգերը կազմակերպվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

Պատվիրատուն 20.05.2020թ.-ին էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ուղարկել է թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» և «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրով կնքվելիք համաձայնագրի նախագծերը՝ ծանոթանալու և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով այն կնքելու և ներկայացնելու համար: Սակայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 15.06.2020թ.-ին հրապարակված «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» և «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրով պետական գնման պայմանագրերի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 10.03.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» և «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրով պետական գնման պայմանագրերը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 15.06.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 7.13-րդ կետի ուժով (ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համաձայնագիր չի կնքվել):

Վերոգրյալ իրավանորմերի՝ գործով հաստատված փաստերի հետ միասին գնահատման և համալիր վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ տվյալ դեպքում, «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի կողմից դրսևորած անգործության՝ թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/1» և «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/3» ծածկագրերով պետական գնման

պայմանագրերի կնքվելիք համաձայնագրի նախագծերը չկնքելու և չներկայացնելու արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, 15.06.2020թ.-ին միակողմանիորեն լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.06.2020թ.-ի թիվ 26/26/9086-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/153 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ